Համաձայն
ՀՀ Կենտրոնական բանկի Խորհրդի
2008թ. մարտի 11-ի թիվ 68-Ն
որոշմամբ հաստատված
«Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ»
Կանոնակարգ 4/04-ի


**«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» Փակ Բաժնետիրական Ընկերություն**
**ՀՀ, ք.Երևան, Նալբանդյան 48, հեռախոս՝ 59-20-20, էլ. փոստ՝ info@armbusinessbank.am**


# ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 13

ք.Երևան                                                            17 նոյեմբերի 2017թ.

| Տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ | պարտատոմս | պարտատոմս |
|---|---|---|
| Արժեթղթերի քանակը՝ | 10,000 հատ | 10,000 հատ |
| Արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ | 10,000 ՀՀ դրամ | 100 ԱՄՆ դոլար |

Մենք՝ ներքոստորագրյալներս, հաստատում ենք, որ սույն հաշվետվության մեջ ներառված փաստերն ու տեղեկությունները հավաստի և լիարժեք են ու չեն պարունակում այնպիսի բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել հրապարակված փաստաթղթի իմաստն ու ամբողջականությունը:

| **Արսեն Միքայելյան** | **Վարչության նախագահ** | | |
|---|---|---|---|
| (անուն, ազգանուն) | (պաշտոնը) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |

| **Մանվել Սահակյան** | **Վարչության անդամ, Վարչության նախագահի տեղակալ-Ֆինանսական դեպարտամենտի տնօրեն** | | |
|---|---|---|---|
| (անուն, ազգանուն) | (պաշտոնը) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |

| | | | |
|---|---|---|---|
| **Վարդան Աղաջանյան** | **Վարչության անդամ, Վարչության նախագահի տեղակալ-Գործառնական դեպարտամենտի տնօրեն** | | |
| (անուն, ազգանուն) | (պաշտոնը) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| **Նշան Գրիգորյան** | **Վարչության անդամ, Վարչության նախագահի տեղակալ-Վարկային դեպարտամենտի տնօրեն** | | |
| (անուն, ազգանուն) | (պաշտոնը) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| **Վահան Մելքոնյան** | **Վարչության անդամ, Գանձապետական դեպարտամենտի տնօրեն-գլխավոր գանձապետ** | | |
| (անուն, ազգանուն) | (պաշտոնը) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| **Նարինե Սարգսյան** | **Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ** | | |
| (անուն, ազգանուն) | (պաշտոնը) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Կորպորատիվ պարտատոմսեր թողարկելու և տեղաբաշխելու պայմանները հաստատելու վերաբերյալ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Խորհրդի թիվ 1227-Ա, որոշումը՝ ընդունված 2017թ. նոյեմբերի 16-ին (Խորհրդի որոշումից քաղվածքը կցվում է):

# «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ»
# ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

(հասցեն՝ ք. Երևան, Նալբանդյան 48)

ք. Երևան 17.11.2017թ.

**ՔԱՂՎԱԾՔ**
**«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ ԽՈՐՀՐԴԻ**

**16.11.2017թ. N 1227-Ա «ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՈՐՈՇՈՒՄԻՑ**

Քննարկելով «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Վարչության 16.11.2017թ. «Կորպորատիվ պարտատոմսեր թողարկելու և տեղաբաշխելու մասին» որոշումը, հիմք ընդունելով «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Կանոնադրության 3.2 կետը և «Խորհրդի գործունեության կանոնակարգի» 5.2 կետի 15) ենթակետը՝ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Խորհուրդը

ՈՐՈՇԵՑ.

1. Հաստատել «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) կորպորատիվ պարտատոմսեր թողարկելու և տեղաբաշխելու հետևյալ պայմանները.
   1) Թողարկել կորպորատիվ պարտատոմսեր 850,000,000 (ութ հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով, 85,000 հատ, 36 ամիս մարման ժամկետով, տարեկան 10 տոկոս եկամտաբերությամբ, արժեկտրոնների եռամսյակային վճարումների պարբերականությամբ:
   Առաջնային տեղաբաշխումն իրականացնել 2017թ. դեկտեմբեր - 2018թ. մայիս ամիսների ընթացքում, մինչև 2018թ. մայիսի 31-ը:
   2) Տեղաբաշխման ընթացքում պարտատոմսերի սահմանված քանակը լրանալու դեպքում դադարեցնել տեղաբաշխման գործընթացը:
   3) Արժեկտրոնային եկամտի վճարման փոխանցումը կատարել վճարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա՝ պարտատոմսերի սեփականատերերի կողմից նշված հաշվարկային հաշվեհամարներին:
   4) Պարտատոմսերի մարման փոխանցումը կատարել Բանկի կողմից տեղաբաշխման առաջին օրվանից հաշվարկված 36 ամիս անց:
   5) Մարման գումարի փոխանցումը կատարել պարտատոմսերի մարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա՝ պարտատոմսերի սեփականատերերի կողմից նշված հաշվարկային հաշիվներին:
2. ………………..
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Խորհրդի նախագահ՝ /ստորագրություն/ Վ. Գրիգորյանց

Իսկականի հետ ճիշտ է
Աշխատակազմի ղեկավար՝ Մ. Ստեփանյան

ԱԲԲ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ АППАРАТ • STAFF